

Կ-167-24.10.2017-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21.5-րդ հոդվածի 2-րդ մասում «հանձնված գործերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև դատարանում դատավորների թվի ավելացման դեպքում դատարանի վարույթում գտնվող գործերի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում «26» թիվը փոխարինել «23» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 3.1-րդ մասում «6» թիվը փոխարինել «9» թվով:

Հոդված 4. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը սահմանում է դատարանում դատավորների թվի ավելացման դեպքում դատարանի վարույթում գտնվող գործերի վերաբաշխման կարգը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կ-167-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 և «Հայաստանի Հանրապետության վարչական

դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Կ-1673-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 ՀՀ օրենքների նախագծերի փաթեթում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-167-24.10.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21.5-րդ հոդվածի 2-րդ մասում «հանձնված գործերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև դատարանում դատավորների թվի ավելացման դեպքում դատարանի վարույթում գտնվող գործերի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում «26» թիվը փոխարինել «23» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 3.1-րդ մասում «6» թիվը փոխարինել «9» թվով:

Հոդված 4. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը սահմանում է դատարանում դատավորների թվի ավելացման դեպքում դատարանի վարույթում գտնվող գործերի վերաբաշխման կարգը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կ-167-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Կ-167³-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	ՀՀ կառավարություն	Նախագծերի փաթեթ	<p>Առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքի 29.1-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած, համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքներում՝ նախատեսելով, որ Հանրային իրավական դրամական պահանջները բոլոր դեպքերում կատարվեն անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ ԴԱՀԿ մարմնի կողմից՝ առանց վարչական մարմնի կողմից գումարի բռնագանձման պահանջով դատարան դիմելու, միևնույն ժամանակ պահպանելով վարչական ակտի հասցեատիրոջ կողմից նշված ակտերը վարչական կամ դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը:</p>	<p>Նախագծերի փաթեթը լրամշակվել է:</p> <p>Նախագծերի փաթեթը լրացվել է «Վարչարարության հիմունքների եվ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով</p>	<p>Ընդունվել է:</p>